Հրանտ Մաթևոսյան

Նա ինքը Հայրենիքն էր

Մեր ժողովրդի կռահումը հասել էր մի զարհուրելի մտքի՝ թե մեր հողը ծերացել է, մեր հերոսների ոտքերի տակ չի դիմանում, տեղի է տալիս. դա միայն կռահում էր, դա չէր հաստատվում իրողություններով կամ այդ հաստատումները չնչին դեպքեր էին այն բանի դեմ, ինչը կոչվելու էր 1915: Զախջախիչ պարտությամբ տանուլ տրվեցին մեր վերջին ճակատամարտերը, ռազմական հանճարները դարձան խեղճուկրակ զորապետներ, կիրճերում արյան մեջ խեղդվեցին մեր կովողների վերջին փոքրիկ խմբերը, պատառոտվեցին նոր գնդեր ոգեկոչող դրոշները, և սերունդներ ու սերունդներ սնած երազների շքեղությունը մի այլանդակ ձեռնածվությամբ վերածեց խղճուկ իրականության - տասը հազար վերստ գետին և յոթ հարյուր հազար որբ: Այսինքն՝ այնպիսի մի վիճակ, երբ ուզվում է, ինքնիրեն ուզվում է, որ հիվանդը մեռնի, և այդ ցանկությունն ավելի քան մարդասիրական է, քանի որ ապաքինումը հիվանդին առողջ չի դարձնի: Եվ փառք ոգևորված այն սերնդին, որ Արարիչ Աստծու նման ի չգոյե ստեղծեց մեզ համար հայրենիք: Դա Ալեքսանդր Մյասնիկյանի, Աղասի Խանջյանի և Արամայիս Երզնկյանի, Չարենցի և Մահարու, Կոջոյանի և Սարյանի, Թորամանյանի և Թամանյանի, Աճառյանի և Աբեղյանի, Ալեքսանդր Սպենդիարյանի և Արշակ Չոպանյանի փառահեղ սերունդն էր, մատյան մի գունդ՝ որ մարտի նետվեց մեզ համար ամենաողբերգական պահին, երբ կարող էինք կորցնել ազգ և երկիր լինելու վերջին հնարավորությունները նույնպես: Տանջահար ժողովուրդն ըստ երևույթին ոգեկոչեց նաև իր ապագայի ուժերը, այլապես երկու տասնամյակը մեզ այդքան մեծեր չէր նվիրի: Դա առաջամարտիկների հերոսական սերունդն էր, և որպես իսկական առաջամարտիկներ նրանց խիտ շարքերը մեր օրերին հասան նոսրացած,

բգկտված, հոշոտված, պատառոտված, ուխտադրժորեն թիկունքից զարկված և, զարմանալիորեն, դարձյալ ոգևորված: Մահարին դեռ ոտքի վրա էր և չէր նկատում, որ հազիվ է ոտքի վրա: Այդպես լինում են սևեռուն նպատակի մարդիկ: Նպատակը նրան հմայել-ձգում էր: Նրա ուժասպառ մարմինը դժվար էր հասնում նրա ձգտման ետևից, ապա ետ մնաց, ապա՝ ոգին հիսուն թվականների մեջ մի տեղ թողեց այդ դավաճան մարմինն ու տարիներ շարունակ սավառնեց դեպի նպատակ առանց մարմնի: Եվ հասավ ու գամեց բարձր գրականությունը մեծ հայրենասիրությանը: Բանաստեղծության աստվածը, երբ ջախջախվում էին մեր երազները, այն հեռավոր տարիներին Մահարուն շշնջացել էր մի մեծ գաղտնիք՝ պետք է գրականությամբ ետ խլել այն, ինչ պահել չենք կարենում ռազմիկների գնդերով: Երբեմն «պարտիզանական կռիվներով», երբեմն՝ կեղծ նահանջներով և վերջապես փայլուն մի ճակատամարտով նա անհայտությունից խլեց ու իր հայրենիքին վերադարձրեց իր Վանը, և մեծ գրող ու այդպիսով մեծ հայրենասեր Գուրգեն Մահարու այդ Վանն արդեն անկորնչելի է: Դա ոչ միայն այլևս անկողոպտելի մասն է հայ գրականության, այլ նաև հայ ապագա իրականության: Դա թռիչքային հրապարակ է դեպի իրական Վան: Դա Արևմտյան Հայաստանի մեծ խավարից Մահարու լույսով բացազատված այն հովիտն է, որ դեպի իրեն կգրավի խարխափող սերունդներ ու սերունդներ: Գանգրահեր այն պատանին՝ հեռու տարիների Մահարին, գաղթելիս ձեռքին ունեցել է դասագիրք «Մեղրագետը» և հոր ատրճանակը. հոր ատրճանակը փոխել է հացով, իսկ մանկության «Մեղրագետը» տարել են Բերկրիի Բանդիմահու ջրերը: Այդ ժամանակ նա վերցրել ու դժվար ճանապարհներով մեզ է հասցրել մի պարկ հող՝ փռելու համար համակերպվող արշակներիս ոտքերի տակ:

Նա երբեք չարտաբերեց, օգտվելով երդմնատրության զրնգուն մթնոլորտից, երդման հանդիսավոր տեքստեր, չդարձավ, այդպիսով, հայրենասեր, նա կատակեց, ծաղրեց, ծիծաղեց, անտեսեց այդ արարողությունը, որովհետև նորակոչիկները և մեկ անգամ դավաճանածներն են երդում տալիս, իսկ նա հայ հայրենասիրության ծանր ուխտի հին ուխտավորն էր: Նա հայրենասիրությամբ գեղեցկանալու կարիքը չէր զգում, այլ զգում էր դժվար հայրենասիրության ծանր տառապանքից ազատվելու կարիքը:

Նրա դիմակի, նրա ծաղրի ու ծիծաղի տակ նրա կարոտի անընդհատ մրմունջն է, և նրա մրմունջների հանրագումարը ցավի մի զարհուրած ճիչ է մեղավոր ու

անմեղ, հիմար ու խելացի, պարկեշտ ու հավակնոտ բոլոր-բոլորիս դեմ.
- Ո՞ւր է իմ անփոխարինելին, ուր է իմ Հայրենիքը:

«Հայաստանի Հանրապետություն», 16.07.1995թ.